Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

ԲԱՆԱՁԵՎԵՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

(15—18 նոյեմբերի 1928 թ.)

Հրատարակություն Խորհրդի Կենտկոմի
ԵՐԵՎԱՆ, 1928 թ.

ԲԱՆԱՁԵՎԵՐ

ԽՈՐՀՐԴԱՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ Ճ-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

(15—18 նոյեմբերի 1928 թ.)

Հայ Դեղագիտության Ինստիտուտ
Գրադարան
Ակադեմիա

А 8071
1928 г.

Հրատարակություն Խորհրդարանի Կենտրոնական Գրադարանի
ԵՐԵՎԱՆ, 1928 թ.

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 1638 բ
ՏԻՐԱԺ 350.

ԲԱՆԱՁԵՎ

ԽՈՐՀՐԴԱՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Խորհրդարի Հայաստանյան 6-րդ համագումարը, լսելով ընկ. Յեգորովի զեկուցումը Միության Կենտկոմի գործունեության մասին, գտնում է այդ բավարար և վարած քաղաքական գիծը ճիշտ։

Միաժամանակ ընդգծելով Կենտկոմի աշխատանքում մի շարք խոշոր նվաճումներ, ինչպիսին են՝ 1) ստորադաս միությունական մարմինների նկատմամբ ղեկավարության ուժեղացումը, 2) միության անդամների իրավատնտեսական դրության բարելավումը, 3) տնտեսական աշխատանքի ուժեղացումը, 4) միության ապարատի պահպանման և վարչատնտեսական ծախքերի կրճատումը, որպիսի հանդամանքը հնարավորություն է տվել գանձող անդամավճարներից հատուցումները ֆոնդերին ավելացնել և հասցնել 51%-ի, 5) մեր միության անդամների մեջ յեղած գործազրկության դեմ պայքարելու գործում վերցրած ճիշտ գիծը և այլն, համագումարը անհրաժեշտ է համարում՝

1. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել միլիցիայի աշխատակիցների իրավատնտեսական և կենցաղային դրության հետագա բարելավման վրա, հարց հարուցելով Համամիությունական որենսդրական մարմիններում համապատասխան դիրեկտիվ ցուց-

մունքներ տալու տեղական խորհրդային կազմակերպություններին։

2. Հանձնարարել Կենտկոմին միջոցներ ձեռք առնելու գյուղխորհուրդների աշխատողների տնտեսական դրության հետագա բարելավման համար։ Միաժամանակ համապատասխան մարմինների առաջ հարց հարուցել գյուղխորհրդների աշխատողների սոցապահովագրության մասին, նկատի ունենալով այն, որ այդ առթիվ գոյություն ունեցող վորոշումը պարզ չլինելու պատճառով խառնաշփոթություն է առաջացնում տեղերում։

3. Շարունակել մեր միության մեջ յեղած գործաղրկության դեմ պայքարելու գիծը և միաժամանակ միջոցներ ձեռք առնել ամենուրեք և լրիվ անցկացնելու կյանքում Համամիությունական Աշխատողկոմատի վորոշումն այդ առթիվ։

4. Հաշվի առնելով միության անդամների կուլտուրական հետամնացությունը ազգային հանրապետություններում, համագումարն անհրաժեշտ է գտնում, վորպեսզի Կենտկոմն ավելացնի բաց թողնվելիք միջոցները կուլտ աշխատանքի համար, մանավանդ գյուղական վայրերի վերաբերմամբ։ Միաժամանակ Կենտկոմը պետք է ավելացնի տեղական ազգային լեզուներով գրականության և վերադաս միությունական մարմինների կարևորագույն վորոշումների հրատարակման համար բաց թողվելիք գումարները։

5. Հանձնարարել Կենտկոմին քննության առնել պրոֆաշխատողներ պատրաստելու համար յերկարատև դասընթացքներ կազմակերպելու հնարավորության հարցը։

6. Հանձնարարել Կենտկոմին ուժեղացնել ղեկավարությունը և հսկողությունը միության կից կազմակերպված սեկցիաների աշխատանքի վրա։

7. Լուրջ ուշադրություն դարձնել ծառայողների առաջքաշման և ծառայության կարգով առաջ գնալու գործին՝ միությունական, խորհրդային և կոոպերատիվ ապարատներում։ Համագումարն անհրաժեշտ է համարում, որպեսզի հետագայում ծառայողների առաջքաշման, ծառայության կարգով առաջ գնալու և առաջ քաշված բանվորների հետ տարվող աշխատանքների փորձը Կենտկոմի կողմից ընդհանրացվի և տրվի դիրեկտիվ ցուցմունքներ տեղական միությունական մարմիններին։

8. Հավանություն տալով մեր միության Կենտկոմի 5-րդ պլենումի վորոշմանը՝ խորհրդային ապարատի ստուգումը բաց կերպով անցկացնելու և պետական ծառայության ընդունվելու իրավունքը կարգավորող որենքի հրատարակման մասին, համագումարը հանձնարարում է Կենտկոմին համապատասխան մարմինների միջոցով արագացնել այս խնդրի լուծումը։

ԿԵՆՏ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով ընկ. Գ. Պողոսյանի հաշվետու զեկուցումը Կենտվարչության գործունեության մասին Հայաստանի Խորհրդային Միության Հանրապետական 6-րդ համագումարը տարած աշխատանքը գտնում է բավարար և վարած գիծը ճիշտ։

Միաժամանակ համագումարն արձանագրում է,

վոր կենտվարչությունն իր աշխատանքներում ունեցել է հետևյալ հիմնական նվաճումները՝

1. Աշխուժացել է միության մասսայական աշխատանքը։ Ուժեղացել են դեկավարչական և հրահանգչական աշխատանքները. ամրացել է միության ֆինանսական դրությունը և զգալի չափով ավելացել են հատկացումները ֆոնդերին։

2. Միությանը հաջողվել է բարձրացնել հետաձգաց խմբակների աշխատավարձը (միլիցիա, ուղղիչներ, պահեստ, խանութային խմբակ), հաջողությամբ անցկացնել հավաքական պայմանագրերի վերակնքման կամպանիան, հասցնելով հավաքական պայմանագրերով ընդգրկվածների տոկոսն աշխատողների 50%-ից մինչև 78,3%։ Ամենուրեք անց է կացված պաշտոնական դրույքների սիստեմը, հաջողվել է վորոշ չափով նվազեցնել աշխատավարձի մեջ գոյություն ունեցող խայտաբղետ դրությունը։ Ցույց է տրված հարկ յեղած մասնակցությունն աշխատավարձի պետչափավորման աշխատանքներին, վորի շնորհիվ կանոնավորվել են հաստիքային խնդիրները և ամրացել է ծառայողների աշխատավարձը։

Ուժեղացել է ժասսաների մասնակցությունը միության տնտեսական աշխատանքում, վորի հետևանքով միությունն ունի մի շարք նվաճումներ պետապարատի ռացիոնալացման և պարզեցման, բյուրոկրատիզմի դեմ պայքարելու և գների իջեցման առաջադրեղներում։

3. Լայնացել և կարմիր անկյունների ցանցը ուժեղացել են կուլտ-հանձնաժողովների աշխատանքները։ Շնորհիվ խմբակների ցուցաբերած ինքնագործ-

ծունեության և արտիստական ուժերի մասնակցության, ուժեղացել և վորակով բարձրացել է ակմբային գեղարվեստական աշխատանքը։ Վերակազմվել և ուժեղացել է գրադարանային գործը. ծավալվել է եքսկուրսիոն աշխատանքը, կազմակերպվել են պրոֆկուրսներ՝ ակտիվի համար և աշխատանք է տարված միության անդամների յերեխաների մեջ (ծնողների կոոպերացում, մանկական ոպերա և այլն)։

Միաժամանակ համագումարը ընդգծում է հետևյալ թերությունները՝

1. Մի շարք կազմակերպություններում միության մասսայական աշխատանքում ընդհանուր ժողովները դեռևս չեն գրավել իրենց արժանի տեղը— հրավիրվում են անկանոն և հաճախումները միության անդամների կողմից պահանջվող բարձրության չեն հասել։ Թույլ է ինքնաքննադատության լողունգի կիրառումը և միության մասսաներն այս աշխատանքի մեջ անհրաժեշտ չափով չեն ներգրավված։ Միության կից սեկցիաներն իրենց աշխատանքները ծավալել են թույլ։ Միությունական աշխատանքը դյուղում դեռևս իր բարձրության վրա չի դրված։

2. Հավաքական պայմանագրի կիրառման վրա տեղերում բավարար հսկողություն չի յեղել, վորի հետևանքով յեղել են խախտումներ ու ավելացել է կոնֆլիկտների թիվը։ Միության անդամների իրավատնտեսական շահերի պաշտպանման խնդիրներում, վորոշ տեղերում յեղել են վարչական թեքման դեպքեր ու անուշադիր վերաբերմունք դեպի միության առանձին անդամը։ Աշխատանքի հանձնաժողովները բավարար աշխատանք չեն տարել և վերջիններիս ֆունկ-

ցիաները շատ տեղերում տեղկոմները վերցրել են իրենց վրա։ Միությանը չի հաջողվել միության գործադուրկ անդամներին բավարար չափով զորակավորել այլ պրոֆեսիաների դծով։ Առաջ քաշման աշխատանքները, ինչպես նաև այդ աշխատանքների հաշվեառումը յեղել են թույլ։

Գավառական կենտրոններում (բացի Յերևանից և Լենինականից) ու գյուղական վայրերում մասսայական տնտեսական աշխատանքը համարյա բացակայել է ու ղեկավարությունը սրա նկատմամբ յեղել է անբավարար։

3. Բավարար չի յեղել պայքարը անգրագիտության և կիսագրագիտության դեմ։ Քաղաքական և արտադրական լուսավորության գործը տարվել է վոչ ծրագրային և սիստեմատիկ ձևով։ Պրոֆ-լուսավորության ծրագիրը լրիվ կերպով չի կատարված։

Կարմիր անկյունների աշխատանքը կրել է պատահական բնույթ։ Ակտիվային աշխատանքներում յեղել է մի շարք նկատելի թերություններ, այն է՝ մասսայական աշխատանքի թույլ վորակը, մեծահասակների հաճախման պակասը, ակտիվային հասարակայնության թույլ զարգացումը և մասսայի պահանջների ուսումնասիրման բացակայությունը։ Ակումբները դեռևս չեն անցել վերադաս մարմինների դիրեկտիվների ինքնաստուգման աշխատանքներին, նրանց ֆինանսական դրությունը շարունակվում է մնալ անկայուն, թույլ է տարված ռագմական պրոպագանդայի աշխատանքները, թույլ է կուլտ-աշխատանքը գյուղում։

Նշած թերությունները և միությունական աշխա-

տանքների այլ ասպարեզներում գոյություն ունեցող բացերը վերացնելու նպատակով, հաժագումարը առաջարկում է հետևյալը՝

ԿԱԶՄ ԼԿԵՐՊԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Շարունակել պայքարը միության առանձին անդամի վերաբերմամբ տեղ տեղ ցույց տրվող անուշադիր վերաբերմունքի և վարչավորման դեպքերի դեմ։ Տեղկոմները և ընդհանրապես միությունական բոլոր մարմինները պետք է ցույց տան ամենաուշադիր վերաբերմունք դեպի միության առանձին անդամը, պաշտպանելով նրա շահերը և միջոցներ ձեռք առնելով բավարարելու նրա որինական բոլոր պահանջները։ Այս նպատակին հասնելու համար, անհրաժեշտ է խստիվ հսկողություն սահմանել, վորպեսզի միությունական մարմիններն անշեղ կերպով կիրառեն այդ առթիվ վերադաս մարմինների կողմից տրված հրահանգները և առանձնապես միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի ԳԿՀ-ները ճշտորեն և առանց ձգձգումների լուծեն առաջացող բոլոր կոնֆլիկտներն ու չխախտվեն աշխ. որենսգիրքը և հավ. պայմանագրերը։

2. Լուրջ ուշադրություն դարձնել կանոնավորելու ընդհանուր ժողովների հրավիրման գործն առանձին հիմնարկություններում և ձեռնարկություններում ու միջոցներ ձեռք առնել բարձրացնելու ժողովների հաճախումները միության անդամների կողմից։ Այս նպատակով անհրաժեշտ է՝

ա) ընդհանուր ժողովները հրավիրել ժամանակին, առանց խոշոր ընդմիջումների։

բ) ամենուրեք անցկացնել ընդհանուր ժողովներում նախորդ ընդհանուր ժողովի վորոշումների կատարման մասին զեկուցում տալու ձևը.

գ) այդ ժողովների քննության առարկա դարձնել միությունական աշխատանքի բոլոր խոշոր խնդիրները և միության անդամներին հուզող հարցերը։ Սրա հետ միասին պարբերաբար դնել զեկուցումներ տեղկոմի կոնֆլիկտային աշխատանքի և աշխատանքի պաշտպանության մասին.

դ) Տեղկոմների հաշվետվություններն ընդհանուր ժողովների առաջ դարձնել պարբերական։ Նվաճումների հետ միասին զեկուցել նաև աշխատանքների մեջ եղած բացերի մասին և ամեն կերպ աջակցել մտքերի լայն փոխանակության և միության անդամների առանձին յելույթներն ու առաջարկություններն ոգտագործել զեկուցումների առթիվ ընդունվելիք բանաձևերի համար։

3. Միջոցներ ձեռք առնել լրիվ կերպով իրագործելու ինքնաքննադատության լոզունգը։ Այս աշխատանքին մասնակից անել միության անդամների լայն խավերին, վորի հետևանքով հնարավոր կլինի դրսևորել միությունական, խորհրդային և առևտրական ապարատում գոյություն ունեցող թերությունները և բյուրոկրատական յերևույթները։

Վերոհիշյալ նպատակով անհրաժեշտ է հաշվետվությունների ժամանակ և մամուլի միջոցով մասսաների առաջ լայն կերպով պարզաբանել մեր աշխատանքի բոլոր թերի կողմերը, ամեն կերպ աջակցել յերևան բերելու միությունական մարմինների և նրանց մեջ ընդգրկվող հիմնարկությունների ու ձեռնարկու-

թյունների մեջ յեղած բոլոր բացերը, վճռականապես պայքարել քննադատության և ապարատի բացերը դրսևորելու հետևանքով տեղի ունեցող հետապնդման դեպքերի դեմ։ Անհրաժեշտության դեպքում կանգ չառնել անգամ միությունական մարմիններին սահմանված ժամանակից շուտ վերընտրելու և ադմինիստրատորներին պատասխանատվության յենթարկելու առաջ։

Վորպեսզի ինքնաքննադատության հետևանքները լինեն արդյունավետ, անհրաժեշտ է ամենալուրջ վերաբերմունք ցույց տալ միության անդամների առողջ առաջարկություններին։ Ամեն մի միջոց ձեռք առնել վերացնելու յերևան հանված բոլոր բացերը և այդ մասին պարբերաբար հաշիվ տալ միության անդամներին։

4. Մասսայական աշխատանքին ավելի զարկ տալու և միության անդամների առանձին խմբակների ապատարկման գործն ավելի լավ հիմքերի վրա դնելու նպատակով, ամեն կերպ ուժեղացնել այդ խմբակներից կազմակերպված սեկցիաների աշխատանքները (առևտրական, խորհրդային-վարչական և կիսաղինվորական)։ Ամեն կերպ աջակցել նրանց աշխատանքներին և լայն հնարավորություններ ստեղծել սեկցիաների առաջ դրված խնդիրները հաջողությամբ կատարելու։ Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է միության վարչությունների նիստերում պարբերաբար լսել սեկցիաների բյուրոների զեկուցումները և տալ անհրաժեշտ ցուցմունքներ հետագա աշխատանքների մասին։ Վերջիններիս զեկուցումները կատարած աշխատանքների մասին ու առանձին կարևոր միու-

թյունական հարցերը քննության դնել համապատասխան սեկցիաների ընդհանուր ժողովներում (կոնֆերանսներում)։ Սեկցիաների բյուրոներին ամեն կերպ մասնակից անել միությունական պրակտիկ, մանավանդ տնտեսական աշխատանքներին։

5. Ել ավելի ուժեղացնել տեղկոմներին կից հանձնաժողովների աշխատանքները։ Այս նպատակով նրանց կազմի մեջ մտցնել այնպիսի ընկերներ, որոնք ունեն որոշ փորձառություն հասարակական աշխատանքի ասպարեզում և ունեն հեղինակություն միության անդամների մեջ։ Բացի այդ անհրաժեշտ է ամեն կերպ ուժեղացնել տեղկոմների ղեկավարությունը հանձնաժողովների նկատմամբ՝ նրանց զեկուցումները լսելու, մշակման յենթարկած առանձին հարցերը մանրամասն քննելու և այլ միջոցներով։ Միաժամանակ տեղկոմները պարտավոր են անգործունյա հանձնաժողովների փոխարեն առաջադրել նոր և ավելի գործունյա կազմ։

6. Լուրջ ուշադրություն դարձնել հետազոտական և հրահանգչական աշխատանքի որակի բարձրացման վրա։ Յուրաքանչյուր հետազոտություն պետք է սկսել միության անդամների հետ զրուցելով, լսելով նրանց դիտողությունները, հայտարարությունները ու դրանից հետո միայն անցնել հետազոտության բուն աշխատանքին։ Գրավոր նյութերը պետք է ունենան մի այն ոժանդակ նշանակություն, ավելի լավ պարզելու հետազոտման յենթակա միությունական վարմի աշխատանքի իսկական դրությունը։ Հետազոտման արդյունքների և կոնկրետ առաջարկությունների մասին անպայմանորեն պետք է ընդհանուր ժողովների միջոցով իրազեկ դարձվեն համապատասխան

կոլեկտիվների բոլոր անդամները։ Բացի այդ, հետազոտության ընթացքում անհրաժեշտ է հետազոտման յենթակա միությունակ. մարմիններին դուգընթացաբար տալ անհրաժեշտ հրահանգ յերևան հանած բացերը վերացնելու միջոցների մասին։

7. Ձեռք առնել վճռական միջոցներ կիրառելու մեր Միության Կենտկոմի հրահանգչական նամակները։ Այս նպատակով անհրաժեշտ է, թե վարչությունների ու տեղկոմների նիստերում և թե ընդհանուր ժողովներում մանրամասն ուսումնասիրության ու մշակման յենթարկել այդ նամակները և յելնելով տեղական պայմաններից, գործնական միջոցներ մշակել կյանքում կիրառելու համար, նախորդք մտցնելով աշխատանքի կոնկրետ ծրագրերի մեջ։ Միաժամանակ խստիվ կերպով հսկել, թե ինչպես են կատարվում այս առթիվ կայացած վորոշումներն ու աշխատանքի ծրագրերի համապատասխան կետերը։

8. Խորացնել ու լավ հիմքերի վրա դնել վերադաս միությունակ. մարմինների հրահանգների և այս վերջինների ու սեփական վորոշումների կատարման ստուգման և ինքնաստուգման գործը։ Առանձին տեղկոմների ստուգման արդյունքների մասին զեկուցել համապատասխան կոլեկտիվների ընդհանուր ժողովներում, իսկ ընդհանուրի արդյունքների մասին — Վարչությունների նիստերում՝ պրոֆակտիվությամբ։ Այս աշխատանքները պետք է կատարվի նախորդք ծրագրված կերպով։ Նույնպիսի կարգով անհրաժեշտ է կատարել նաև ինքնաստուգման աշխատանքները և արդյունքների մասին զեկուցել շահագրգռված միությունակ. մարմինների նիստերում։ Միևնույն ժամա-

նակ տեղերում անցկացնել ինքնաստուգման հանձնաժողովներ առաջադրելու և նրանց միջոցով տեղկոմների աշխատանքները ստուգման յենթարկելու ձևը։

9. Ամեն կերպ աշխատել տեղկոմներում մտցնել աշխատանքի կոլեգիալ ձև։ Պայքարել այն յերևույթի դեմ, յերբ միությունական աշխատանքները տանում են միայն տեղկոմի նախագահը կամ քարտուղարը։ Այս նպատակով անհրաժեշտ է տեղկոմի անդամների մեջ հավասարապես բաժանել միությունական բոլոր աշխատանքները և կոլեկտիվ կերպով քննության առնել միությունական բոլոր խոշոր խնդիրները. ամեն մեկից առանձին պահանջել հաշվետվություն կատարած աշխատանքների մասին։

10. Միջոցներ ձեռք առնել միության վարչություններում զարգացնելու ձրի հասարակական աշխատանք։ Այս նպատակին հասնելու համար, անհրաժեշտ է միությունական գործնական աշխատանքներում ամեն կերպ ոգտագործել վարչության բոլոր անդամներին, տալով նրանց առանձին հանձնարարություններ և միասին քննարկելով վարչության աշխատանքների ընթացիկ հարցերը. միևնույն ժամանակ ձրի հասարակական աշխատանքի կարգով վարչության աշխատանքներում ոգտագործել նաև պրոֆակտիվին և միության շարքային ակտիվ անդամներին։

11. Ամեն կերպ կրճատել շրջաբերականների թիվը և վերջ տալ ավելորդ գրագրություններին, որի փոխարեն ուժեղացնել կենդանի ղեկավարության գործը։ Այս նպատակով այնտեղ, որտեղ կատարվում է՝ շարունակել, իսկ որտեղ չի կատարվում՝ կիրառել ժող Միության Կենտկոմի 3-րդ պլենումի որոշումը,

ըստ վորի միությանն այդարատում աշխատող պատասխանատու աշխատակիցները պարտավոր են, ի հաշիվ գրասենյակային աշխատանքի, որվա վորոշ ժամերը տրամադրել հիմնարկություններում և ձեռնարկություններում միության անդամներին անմիջականորեն սպասարկելու և տեղկոմներին կենդանի ղեկավարություն ցույց տալու համար։

12. Խոշոր նշանակություն տալով հաշվային աշխատանքի ռացիոնալացման և պարզեցման գործին առանձնահատուկ ուշադրություն դարձնել հաշվային և վիճակագրության գծով աշխատողների ասոցիացիայի (ՈՐՈՒ) աշխատանքներին։ Ամեն կերպ ընդառաջել և հնարավորություններ ստեղծել ասոցիացիայի արդյունավետ աշխատանքների համար։ Պարբերաբար լսել բյուրոյի զեկուցումը միության վարչության նիստերում (Յերևան, Լենինական) և միջոցներ ձեռք առնել ասոցիացիայի աշխատանքների մասսայականացման և հաշվային աշխատավորների լայն խավերին այդ աշխատանքներին մասնակից անելու համար։

Միաժամանակ անհրաժեշտ համարել ասոցիացիայի հանրապետական բյուրոյում (Յերևանի) ունենալ մեկ ազատ աշխատող։

13. Առանձին ուշադրություն դարձնել մեր միության գյուղական կազմակերպությունների աշխատանքների աշխուժացման և ուժեղացման վրա։ Այս նպատակով ավելի ևս ճշտել գյուղական կազմակերպությունների կառուցվածքը և ամրացնել կենդանի կապը նրանց հետ։ Սրա հետ միասին պարբերաբար հրավիրել գյուղական աշխատողների խորհրդակցություններ միությունակ. կարևոր ինդիրների լայն

քննարկության համար։ Աշխատանքները գյուղական վայրերում մասսայական դարձնելու համար, թե վարչությունների և թե շրջտեղկոմների հաշվետվությունները պարբերաբար դնել մեր միության անդամների շրջանային ընդհանուր ժողովներում։ Միաժամանակ լուրջ ուշադրություն դարձնել գյուղում պրոֆակտիվ պատրաստելու և յեղածը վորակավորելու վրա։ Գյուղական վայրերում գտնվող միության անդամներին լայն կերպով մասնակից անել Խորհրդային իշխանության հերթական ձեռնարկումների իրագործմանն ուժանդակելու գործում։

14. Ե՛լ ավելի ուժեղացնել աշխատանքը կանանց մեջ։ Աշխատել ավելի լավացնելնրանց շահերի պաշտպանության և միության գործնական աշխատանքում ոգտագործելու գործը։

15. Շարունակել յերիտասարդներին միությունական աշխատանքներին մասնակից անելու գործը։ Ամեն կերպ ձգտել ավելացնել յերիտասարդների թիվը միությունական բոլոր մարմիններում։ Ծառայողների ընդհանուր ժողովներում դնել առանձին զեկուցումներ յերիտասարդության մեջ տարվող աշխատանքների մասին։

16. Ամեն կերպ աշխատել ուժեղացնել միությունական աշխատանքները միության գործադուրկ անդամների մեջ։ Պարբերաբար հրավիրել գործադուրկների ընդհանուր ժողովներ, որակարգերում մտցնելով նրանց հուզող և հետաքրքրող հարցեր։ Միաժամանակ հատուկ զեկուցումներ տալ գործադուրկներին աշխատանքային ոգնություն ցույց տալու համար միության կողմից գործածվող ձեռնարկումների մասին։

Բացի այդ, միջոցներ ձեռք առնել գործաղուրկներին ներգրավելու միությունական աշխատանքների մեջ և մասնավորապես կուլտ-աշխատանքների։

17. Գործաղուրկներին, ըստ իրենց կարիքի աստիճանի սպառարկելու և աշխատանքային ու դրամական ոգնություն ցույց տալու նպատակով կիրառել կրկնակի հաշվառման ձևը։

18. Աշխատել հետագայում ել ավելի կրճատել միության վարչա-տնտեսական ծախսերը և այդպիսով ստեղծել հնարավորություններ ընդհանուր միջոցներից ֆոնդերին հատկացումները ել ավելի ավելացնել և հասցնել մեր Միության Համամիությունական 7 րդ համագումարի կողմից սահմանած նորմային (40%)։ Միևնույն ժամանակ ձեռք առնել կտրուկ միջոցներ, խստիվ իրագործելու ֆինանսական դիսցիպլինան։

19. Լուրջ ուշադրություն դարձնել անդամավճարների կանոնավոր գանձման վրա։ Անդամավճարները ժամանակին չվճարողների դեմ ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ անել հիշեցումներ, ցուցակները փակցնել պատերին, ազդել ընդհանուր ժողովների, պատի լրագրերի և այլ միջոցներով։ Յերեք ամիս առանց հարգելի պատճառով անդամավճարներ չմուծողների դեմ խիստ կերպով կիրառել միության կանոնադրության համապատասխան կետը։ Դրա հետ միասին ձեռք առնել կտրուկ միջոցներ, վորպեսզի գանձված անդամավճարները տեղկոմների կողմից առանց ուշացումների մուծվեն միության դրամարկղը։

20. Անդամավճարների կանոնավոր գանձումը խոշոր չափով կախված և վերատուգիչ հանձնաժողովների, գանձապահների և գլխամասվարների աշխա-

ԱՅՈՒՐԱՄԱՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
A 8071
1968

տանքից։ Այդ պատճառով հիշյալ մարմիններին անհրաժեշտ է ամեն կերպ աջակցել իրենց վրա դրված պարտականությունները հաջողությամբ կատարելու համար։ Հրահանգչական խորհրդակցություններով, նպատակային կարճատև կուրսերով և հրահանգչական այլ միջոցներով ամեն կերպ բարձրացնել նրանց վարակը և սովորեցնել աշխատանքի մեթոդներին։

Բոլոր տեղկոմներում կիրառել ֆին-հաշվետվության սիստեմը կենտկոմի կողմից առաջադրած ձևերով։

21. Նկատի ունենալով կենդանի հրահանգչության և տեղերի հետ կապի ուժեղացման անհրաժեշտությունը, համագումարը հանձնարարում է կենտվարչությանը հարց հարուցել կենտկոմի առաջ ավելացնելու կենտվարչության վճարովի ապարատը մեկ հրահանգչով։

22. Ամեն կերպ զարգացնել Փոխադրության դրամարկղների ինքնագործունեությունը։ Պարբերաբար հրավիրել նրանց անդամների ընդհանուր ժողովներ և քննության առնել ՓՈԴ-երի գործունեությանը վերաբերվող բոլոր կարևոր խնդիրները (նախահաշիվների քննություն, փոխատվությունների տրման կարգի սահմանումը և այլն)։ Ամեն կերպ ամրացնել ՓՈԴ-երի լիազորների ինստիտուտը և ուժեղացնել Յերևանի միացյալ ՓՈԴ-ի խորհրդի աշխատանքները։ Կանոնավորել անդամավճարները ժամանակին գանձելու գործը։ Միաժամանակ միջոցների դիմել, վորպեսզի տրված փոխատվությունները ժամանակին վերադարձվեն։ Փոխատվությունները չվերադարձնողներից

հասանելիք պարտքերը գանձել պարտադիր կարգով— դատարանի միջոցով։

23. Քաղաքներում ինքնուրույն ՓՈԴ-եր կազմակերպել այն դեպքում, յեթե կան մասնակցողներ 50-ից վոչ պակաս։ Անհրաժեշտ դեպքերում մանր հիմնարկությունները միացնել և ստեղծել շրջանային ՓՈԴ եր։

ՏԱՐԻՖ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Հաշվի առնելով Խորհրդային պետության ֆինանսական լարվածությունը և յերկրի ինդուստրացման անհրաժեշտությունը ներկա շրջանում, միությունը չի կարող իր առաջ աշխատավարձի ընդհանուր բարձրացման խնդիր դնել։ Բայց դրա հետ միասին համագումարն անհրաժեշտ և գտնում աշխատել բարձրացնելու հետամնաց խմբակների աշխատավարձը, հաշվի առնելով ֆինանսական հնարավորությունները (միլիցիա, դատական մարմինների միջին տեխնիքական աշխատողներ, ուղղիչ տներ, խանութ-պահեստային այն խմբակները, վորոնց աշխատավարձը հետ է մնացել)։

2. Նկատի ունենալով այն, վոր պետական բյուջեյի մեջ գտնվող, ինչպես և տնտեսավարական հիմնարկությունների մեջ նույնանման պաշտոնների նկատմամբ գոյություն ունի իրարից մեծապես տարբերվող աշխատավարձ, միությունը պետք է ձգտի իրարը մոտեցնել այդ հիմնարկներում աշխատողների աշխատավարձի չափերը, բարձրացնելով հետ մնացած խմբակների աշխատավարձը։

3. Համագումարը գտնում է անհրաժեշտ շտա-

պեցնել աշխատավարձի պետչափավորման անցկացումը տեղական բյուջեյում գտնվող հիմնարկությունների նկատմամբ և ձեռք առնել միջոցներ ապահովելու այդ աշխատանքի վերջնական ավարտումը վոչ ուշ քան 1929 թվի հունվար ամիսը։ Նմանապես աշխատել 1928—29 տարվա ընթացքում պետչափավորման կարգն անցկացնել նաև բանկերում, Պետապում, Սոցապգանձարկղում և խնայողական գանձարկղներում։ Այս աշխատանքներում միությունական բոլոր մարմինները պետք է ունենան ամենաակտիվ մասնակցությունը։

4. Մնացած բոլոր հիմնարկություններում և ձեռնարկություններում աշխատավարձի կանոնավորումն անցկացնել հավաքական պայմանագրերով պաշտոնական դրույքներ սահմանելու միջոցով։ Բացի այդ, կենտվարչությունը պետք է աշխատի լրիվ չափով ընդգրկել աշխատավարձի պետչափավորմանն անցած հիմնարկությունները, ծառայողների իրավական պայմանները կարգավորող, լրացուցիչ համաձայնությունները։

5. Ձեռք առնել վճռական միջոցներ, վորպեսզի տեղկոմների կողմից լինի խստիվ հսկողություն հավաքական պայմանագրերով և պետչափավորման կարգով սահմանված դրույքների ճիշտ կիրառման վրա։

6. Կենտվարչությունը պետք է մշակի հրահանգ նորմայի չենթակա բանվորական որով աշխատողների աշխատանքի պայմանների և նրա շրջանակի մասին։

7. Տեղկոմների կոնֆլիկտային աշխատանքները կանոնավորելու նպատակով, անհրաժեշտ համարել ձեռք առնել հետևյալ միջոցները՝

ա) Պայքարել կոնֆլիկտների քննության ձգձգումների, դեպի միության անդամների բողոքները անտարբեր վերաբերմունքի և բանֆրակցիաների կողմից նկատվող վարչական թեքումների դեմ։

բ) Նախնական ձեռնարկումների միջոցով ամեն կերպ աշխատել տեղերում լուծել կոնֆլիկտային բնույթ կրող բոլոր հարցերը, առանց կոնֆլիկտ դարձնելով այդպիսիները.

գ) Ծագած կոնֆլիկտների ընթացքի և հետևանքների մասին ժամանակին իրազեկ դարձնել միության անդամներին.

դ) Սիստեմատիկաբար տալ հրահանգչական ցուցմունքներ ԳԿՀ բանֆրակցիաներին։ Իրավաբանական ոգնության գործը մոտեցնել մասսաներին. կազմակերպել իրավական ոգնության ցանց, ձրի հասարակական աշխատանքի կարգով, և փոստարկղներ՝ հիմնարկություններում, պատի թերթերում հատկացնել հատուկ տեղ հարց ու պատասխանների համար։

8. Աշխատանքի պաշտպանության ասպարեզում։

ա) Լուրջ ուշադրություն դարձնել ծառայողների աշխատանքի սանիտարա-առողջապահական պայմանների լավացման վրա.

բ) Հավաքական պայմանագրերում և ներքին կարգապահության կանոններում նախատեսնել այն անհրաժեշտ ու տարրական ձեռնարկումները, որոնց միջոցով հնարավոր կլինի թեթևացնել և լրացնել միության անդամների աշխատանքի պայմանները.

գ) Առանձնապես ուշադրություն դարձնել, որպեսզի նոր բացվող հիմնարկությունների և ձեռնարկությունների կողմից պահպանվեն որենքով նախա-

տեսված առողջապահական բոլոր կանոնները և հսկել վորպեսզի հետագայում ճիշտ կերպով ի կատար ածվեն հիշված կանոնները։

9. Շարունակել պայքարն արտաժամյաների դեմ, ձեռք առնել միջոցներ ել ավելի կրճատելու արտաժամյա աշխատանքները, թույլ տալով այդպիսիները միմիայն բացառիկ դեպքերում։ Պարտավորեցնել հիմնարկություններին և ձեռնարկություններին արտաժամյա աշխատանքների համար անպայմանորեն ոգտագործել Աշխարհայումցուցակագրված գործադուրկներին։ Սրա հետ միասին ձեռք առնել կոնկրետ միջոցներ չ'չափավորված բանվորական որով աշխատողներին ապահովելու ամեն շաբաթ 42-ժամյա անընդհատ հանգիստով։

10. Արձանագրելով վորոշ բարելավում միլիցիայի աշխատողների իրավական դրության մեջ, ձեռք առնել բոլոր միջոցները, հետագայում ավելի բարելավելու այդ և ապահովելու նրանց հանգստի որերով ու ազատելու արտաժամյա աշխատանքներ կատարելուց մասնավորապես ձեռք առնել միջոցներ իրագործելու ԿՎՀ-ի և ԲԳՏ-ի կողմից այս առթիվ առաջադրած բոլոր առաջարկությունները։

11. Համագումարն արձանագրում է, վոր կենցաղի բարելավման ֆոնդերի վորոշ մասը չի ծառայել իր իսկական նպատակին և իր ժամանակին չի ծախսվել։ Հետագայում միջոցներ ձեռք առնել հաշվետու տարին վերջանալուց անմիջապես հետո պարզելու այդ նպատակին հատկացվելիք գումարների չափը և միջոցների դիմել, վորպեսզի կենցաղային ֆոնդին հատկաց-

ված գումարները բացառապես ծախսվեն կոլեկտիվների կարիքների համար։

14. Գործազրկության խնդիրը մեր միության գծով շարունակում է կրել սուր բնույթ։ Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել մեր միության գործազուրկ անդամներին այլ պրոֆեսիաների գծով վերավորակավորելու խնդրի վրա։ Մեր միության գծով կազմակերպել այնպիսի դասընթացներ, որոնք կ՚համապատասխանեն աշխատանքի շուկայի պահանջներին։ Ուժեղացնել աշխատանքային ոգնությունը, կազմակերպել աշխատանքային կոլեկտիվներ և պայքարել այն դեպքերի դեմ, երբ աշխատանքի են ընդունում առանց Աշխբորսայի։

Ընդգծել, որ Աշխժողկոմատը բավարար աշխատանք չի կատարել մեր միության գործազրկության դեմ պայքարելու գործում, չնայած նրան, որ այդ առթիվ կա Համամիությունական Աշխժողկոմատի հատուկ վոլոշումը։ Ձեռք առնել բոլոր միջոցները հիշյալ վորոշումը հետագայում կյանքում կիրառելու համար։

15. Հիմնարկ-ձեռնարկությունների ադմինիստրացիայի կողմից կատարվող շտատների կրճատման գործում միությունական մարմինները պետք է ունենան ակտիվ մասնակցություն, թույլ չտալով այնպիսի կրճատումներ, որոնք պատճառ կդառնան ծառայողների չափից դուրս ծանրաբեռնվածության և սիստեմատիկ արտաժամյա աշխատանքների։

16. Համագումարն արձանագրում է, որ տնտեսական աշխատանքի ասպարիզում դեռևս չեն գործադրված բոլոր անհրաժեշտ միջոցներն այդ աշխա-

տանքն ամենուրեք զարգացնելու համար։ Հետագայում անհրաժեշտ է՝

ա) Այնտեղ, վորտեղ չեն կազմակերպված տնտեսական հանձնաժողովներ և խորհրդակցություններ— կազմակերպել։ Պրոֆլիությունններում այդ աշխատանքը կատարել հիմնարկի ընդհանուր ժողովի միջոցով։

բ) Բանվորների հետ միասին—ընկերական կոնֆերանսները, վորոնք բավականին խոշոր արդյունքներ են տվել անցյալում, հրավիրել հատուկ ուշադրությամբ և խնամքով։ Այդ փորձն ավելի ևս լայնացնել, ընդգրկելով խորհրդային ու հասարակական մասսայական կազմակերպությունները.

գ) Բոլոր միությունական կազմակերպությունները պետք է ձեռք առնեն մաքսիմում միջոցներ զարգացնելու տեղերում մասսայական տնտեսական աշխատանքները։ Պարտավորեցնել միության որգաններին ուժեղացնել իրենց ղեկավարությունն այս խնդրում։

17. Տնտեսական հանձնաժողովների ու խորհրդակցությունների աշխատանքների բովանդակությունը գլխավորապես պետք է լինի հետևյալում՝ ուսումնասիրել ու պարզել վերադիր ծախսերի կրճատման հետագա հնարավորությունները, գների իջեցման խնդիրը, ուշադրություն՝ դեպի մթերման հարցը, հիմնարկի նպատակահարմար կառուցվածքը (բաժինների, յենթաբաժինների, պահեստների) և նրա փոփոխությունները, գործավարության ու հաշվապահության սիստեմը, սպառողին ապրանքներ բաց թողնելու ձևը, հաճախորդներին լավ և արագ սպասարկելու

խնդիրը, աշխատանքի դիսցիպլինայի բարձրացումը, պայքարը բյուրոկրատիզմի դեմ և այլն։

Ցելնելով վերոհիշյալ նպատակներից, անհրաժեշտ է, որ դեպի խոշոր հիմնարկներում ու ձեռնարկություններում հրավիրվեն արտադրական կոնֆերանսներ, և բացի այդ հաճախակի լինեն խորհրդակցություններ առանձին պրոֆեսսիաների գծով (մանուֆակտուրիստների, մսագործների, հաշվապահների, քարտուղարների, գործավարների և այլն)։ Ուժեղացնել և ավելի սիստեմատիկ դարձնել միության ղեկավարությունն այդ աշխատանքների նկատմամբ։

18. Համագումարն արձանագրում է, որ տնտեսական հանձնաժողովների ու խորհրդակցությունների որոշումների կիրառումը յեղել է որոշ չափով թույլ։ Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, որպեսզի ադմինիստրացիայի կողմից այս որոշումները ժամանակին կիրառվեն, իսկ չկիրառման պատճառների մասին անմիջապես տեղյակ դարձվեն միությունակ. մասսաները։ Անհրաժեշտության դեպքերում ձեռք առնել միջոցներ համապատասխան մարմինների միջոցով պատասխանատվության յենթարկել ադմինիստրացիային։ Միաժամանակ պետք է խստիվ միջոցների դիմել այն ադմինիստրատորների դեմ, որոնք այս կամ այն ճանապարհով կհալածեն միության անդամներին նրանց ակտիվ տնտեսական աշխատանքի կամ քննադատության համար։

19. Ցելնելով ոգտակար և գնահատելի առաջարկներն ավելի խրախուսելու անհրաժեշտությունից, համագումարը գտնում է, որ պետք է արագացնել բոլոր հիմնարկներում և ձեռնարկություններում պրեմ-

յալ ֆոնդեր ստեղծելու հարցը։

20. Համագումարը գտնում է, որ 15-րդ կուսհամագումարի «պայքար բյուրոկրատիզմի դեմ» առաջադրած լոզունգը պետք է դառնա առանձնապես մեր միության ներքո տեղական մարմինների աշխատանքների առանցքը։ Համառ ու յերկար աշխատանքի միջոցով միությունակ. մարմինները պետք է սովորեցնեն միության անդամին մեր ապարատում գոյություն ունեցող բյուրոկրատիզմի և քաշքշուկների դեմ անողոք պայքար մղել և այսպիսով սոցիալիստական վոգով դաստիարակեն պրոլետարիատի շահերին նվիրված, Խորհրդային իշխանության քաղաքականությունը կյանքում կիրառող գիտակից ծառայող։

21. Միությունական որգանները՝ տեղկոմներից մինչև կենտ. վարչությունը, ծրագրված կարգով պետք է լսեն իրենց նիստերում, ժողովներում ու կոնֆերանսներում տնտեսական մարմինների հաշվետվությունները, գլխավոր ուշադրությունը դարձնելով այդ հիմնարկների առևտրական քաղաքականության, ֆինանսական-առևտրական ծրագրի և ապարատի պարզեցման ու մասսաներին լավ սպասարկելու խնդիրների վրա։ Նախ քան այդ զեկուցումներ լսելը, իրրև կանոն միությունական մարմինների կողմից պետք է հետազոտման յենթարկվեն այդ հիմնարկներն ու ապտրվեն հարակից զեկուցումներ։

22. Ցույց տալ ակտիվ և ծրագրված մասնակցություն տնտեսական մարմինների բյուջեների հաստիքների և մասնավորապես առևտրա-ֆինանսական ծրագրեր կազմելու աշխատանքներին։ Այս աշխատանքներում մասնակցություն պետք է ունենան միության

բոլոր կազմակերպությունները, վորի ընթացքում անհրաժեշտ է խոշոր ուշադրություն դարձնել, վորպեսզի բոլոր ֆին-պլաններում և բյուջեներում նախատեսվեն անհրաժեշտ գումարներ աշխատողների աշխատանքի պայմանները բարելավելու համար։

23. Բանվորների և գյուղացիների առաջ քաշման հարցը պետապարատում ու կոոպերացիայում և սիստեմատիկ աշխատանքն առաջ քաշվածների հետ մինչև այժմս ինչպես միության, նույնպես և հիմնարկների ղեկավարների կողմից յուրջ ուշադրության առարկա չեն դարձել։ Դրա հետևանքով այս ուղղությամբ կան խոշոր բացեր, վորոնք արգելք են հանդիսանում առաջ քաշվածներին նպատակահարմար կերպով ոգտագործելու։ Մյուս կողմից շատ դեպքերում առաջ քաշման գործում միությունակ. մարմինները համարյա վոչ մի մասնակցություն չեն ունեցել։ Հիշյալ բացերը վերացնելու համար անհրաժեշտ է՝

ա) ամեն կերպ աջակցել տեղական այն մարմիններին, վորոնք զբաղվում են արտադրությունից բանվորներ առաջ քաշելու գործով, ոգնել այդ կազմակերպություններին նպատակահարմար կերպով ոգտագործելու առաջ քաշված բանվորներին։ Առաջ քաշող մարմինները պարտավոր են ոժանդակել առաջ քաշվածներին պարզաբանելով նրանց այն բոլոր պահանջները, վորոնք առաջադրում են այն պաշտոնները, վորոնց համար նրանք առաջ են քաշված։

24. Վոչ պակաս նշանակություն ունի նաև ծառայողների առաջ քաշումն այն հիմունքներով և այն վարչատնտեսական պաշտոնների համար, վորոնք հրահանգված են մեր միության կենտկոմի 4 րդ պլենումի

կողմից։ Միության վարչությունները պետք է՝ ժամանակին պարզեն և հաշվի առնեն հասարակական աշխատանքի փորձառություն ունեցող ծառայողներին, Խորհրդային ԲՈՒՀ-երը, բանվակները և այն ավարտած յերիտասարդ մասնագետներին, վորոնք կարող են առաջ քաշվել ղեկավար աշխատանքի կամ տվյալ հիմնարկության ներսում կամ նրանից դուրս։ Միաժամանակ պետք է ձեռք առնել կտրուկ միջոցներ, վորպեսզի ղեկավար պաշտոնների համար առաջ քաշվողների թեկնածությունները նախորոք համաձայնեցվեն միության հետ։

25. Համագումարը միանգամայն միանալով մեր միության Կենտկոմի 5-րդ պլենումի վորոշումներին պետապարատի լավացման և ծառայողների անհրաժեշտ կուրսեր ստեղծելու մասին, անհրաժեշտ է գտնում արագացնել պետ. ծառայող լինելու իրավունք ունեցողների մասին որենքի հրատարակումը և միաժամանակ առաջարկում է բոլոր միությունական մարմիններին ակտիվ մասնակցություն ունենալ պետապարատի ստուգման աշխատանքներին, մասսայական քննություն տալով յեղած անհարազատ տարրերին վերաբերվող առանձին հարցերի քննությանը։

ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Նկատի ունենալով Խորհրդային Միության ներկա քաղաքական և տնտեսական կյանքի պայմանները, մեր կուլտ-կրթական աշխատանքը ներկա ժամանակամիջոցում իր առաջ պիտի դնի հետևյալ խնդիրները.—

ա) Բարձրացնել մեր միության մասսաների կուլտուրական մակարդակը, ներգրավելու այդ մասսաների ամենալայն խավերին ինքնաքննադատության միջոցով մեր սոցիալիստական շինարարության, պետական, կոոպերատիվ ապարատի ռացիոնալացման և ճկունացման, բյուրոկրատիզմի հաղթահարման ու վերացման աշխատանքներին։

բ) Կռիվ դաշնակցության, ոպեցիֆիկյան, հակահեղափոխական ու հակախորհրդային հոսանքների և այլ վնասակար իդեոլոգիական ազդեցությունների դեմ։ Պայքարել միության անդամների մեջ դեռևս տիրապետող մանր բուրժուական իդեոլոգիայի ու հին կենցաղի մնացորդների, անկուլտուրականության դեմ, և ամրացնել պրոլետարական իդեոլոգիան ու նոր կենցաղը։

գ) Բարձրացնել միության անդամների աշխատանքի վորակը և տալ նրանց անհրաժեշտ գիտելիքներ ու դաստիարակություն, ստեղծելու քառիս բուն իմաստով կուլտուրական և իրենց բարձրության վրա կանգնած խորհրդային ծառայող, գործակատար, միլիցիոներ և այլն.

դ) Միության մասսային տալ պրոլետարական դասակարգային գիտակցություն և լայն գաղափար մեր միության ու խորհրդային պրոֆ շարժման պատմության, ընթացքի և խնդիրների, ինչպես և միջազգային հեղափոխական պրոֆ·շարժման մասին և այդպիսով դրդիչ հանդիսանալ, վոր մեր մասսաները ընդհանան քայլ առ քայլ միջազգային հեղափոխական բանվորության հետ։

Միության հետագա գործնական կուլտ·կրթա-

կան աշխատանքի, ինչպես և վերոհիշյալ աշխատանքի մեջ յեղած բացերի վերացման համար, համագումարն առաջարկում է՝

1. Անգրագիտության և կիսագրագիտության վերացման համար միությունակ. մարմինները պետք է ամենալայն կերպով ողտագործեն Լուսժողկոմատի արտադպրոցային կրթական ցանցը։ Միությունական մարմինները նույնպես պետք է սեփական միջոցներով հիմնեն անգրագետների և կիսագրագետների խմբակներ, ինչպես նաև ինքնազարգացման խմբակներ. բացի դրանից միությունը պետք է ամենալայն մասնակցություն ունենա կուլտուրական արշավի մեջ, աշխատելով կցել անգրագետներին և կիսագրագետներին միության ուսանող, կոմյերիտական և կուսակցական անդամներին։

2. Պետք է լայն չափով զարգացնել քաղաքական լուսավորության գործը միության տարբեր խմբերի և խավերի մեջ. մասսայական քաղլուսավորչական աշխատանքը պատահական բնույթ չպիտի կրի, այլ տարվի պլանային ձևով։ Զեկուցումների վերաբերմամբ պետք է լինել խստապահանջ, կատարելով հաջող ընտրություն և պահանջելով, որ լավ նախապատրաստվեն։ Համագումարն անհրաժեշտ է համարում, որ լեկցիոն գործը կենտրոնացվի կենտվարչություններում և գավվարչություններում, վերջիններս պետք է նշանակեն զեկուցողներին և տան մեթոդական ցուցումներ։

Խմբակային աշխատանքն, ինչպես և քաղաքական ինքնազարգացման գործը, պետք է դրված լինեն հիմնավոր և խնամքով։ Խմբակները պետք ունենան բո-

որ անհրաժեշտ հարմարությունները (սենյակ, տաքություն, լուսավորություն, ծրագրեր, ձեռնարկներ և այլն)։

3. Լավացնել և ընդլայնել պրոֆ լուսավորության գործը միության անդամների մեջ։ Զեկուցումներ, հարց ու պատասխանի յերեկոներ, կազմակերպել հետաքրքրող հարցերի շուրջը, ինչպես նաև այն հարցերի, վորոնց վերաբերմամբ առաջ և բերված հետաքրքրություն մասսայի մեջ։ Լայն կիրառել ցիկլային դասախոսությունների սիստեմը։

Պրոֆ-խմբակների աշխատանքը սիստեմատիկ դարձնելու համար, կիրառել խմբակավարների վարձատրման սիստեմը։ Կազմակերպել հատուկ պրոֆ-խմբակներ, աշխատանքի որենդրության, սոցիալական ապահովագրության որենքների ու կանոնների ուսումնասիրման և յուրացման համար։

Պրոֆակտիվի վերապատրաստման հարցը համարելով կարևոր խնդիր, զարկ տալ կարճատև նպատակային կուրսերի կազմակերպմանը տեղկոմական հանձնաժողովների համար։ Գավառական կենտրոններում կազմակերպել պրոֆ դպրոցներ, տեղկոմական աշխատողների վերապատրաստման համար։

4. Մեր միությունը մինչև այժմ քիչ ուշադրություն և դարձրել արտադրական լուսավորության գործին, առանց վորի անկարելի յե ծառայողների վորակի բարձրացումը, ինչպես և նրանց առաջացումը պաշտոնի մեջ։ Անհրաժեշտ է այդ գործին հատուկ ուշադրություն դարձնել։ Կենտրոնական և գավվարչությունները պիտի յայն տեղ տան մասսայական և խմբակային արտադրական լուսավորության։ Հիմնարկների գծով պիտի կազմա-

կերպել զեկուցումներ, պարզելու համար ծառայողներին տվյալ հիմնարկի ֆունկցիաները, աշխատանքի պլանը, մեթոդները և քաղաքականությունը։ Բացի դրանից պիտի հատուկ զեկուցումներ կազմակերպել նախապատրաստելու ծառայողներին հիմնարկների կողմից տարվող այս կամ այն կամպանիաների համար) գյուղմիասնարկ, գյուղատնտեսական վիճակագրական կամպանիա և այլն)։ Հիմնարկների նյութական աջակցությամբ պիտի կազմակերպել ժամանակագրական խմբակներ. ծառայողների վերապատրաստման համար (հաշվային, կոոպերատիվ, առևտրանքագիտական, վիճակագրական, բանկային և այլն)։ Պիտի հարց դնել Լուսժողկոմատի և Աշխժողկոմատի առաջ արագացնելու մասնագիտական կուրսերի կազմակերպումը և ամեն կերպ աջակցել այդ կուրսերում տեղավորելու միության գործազուրկ և ծառայող անդամներին։

5. Մեծ և գրքի և մամուլի դերը բոլոր տեսակի լուսավորչական, հանրակրթական և ինքնազարգացողական աշխատանքների ասպարեզում։ Այդ իսկ պատճառով պետք է խիստ մեծ ուշադրություն դարձնել ուժեղացնելու գրադարանային և ընթերցարանային աշխատանքը։ Խորհրդի 7-րդ Համամիությունական համագումարի վորոշումը տեղկոմական գրադարանային ցանցի կենտրոնացման մասին, պիտի կիրառել մինչև վերջ. անցկացնելով այդ կենտրոնացումը բոլոր գավառներում։ Համագումարը հավանություն տալով կենտրոնական վարչության գրադարանային աշխատանքի ասպարիզում կատարած քայլերին, գտնում է, վոր պետք է գրադարանները և հատկապես շարժական գրադարանները ուժեղացնել, ավելացնելով նրանց

վրա ծախսվող գումարները, ինչպես կենտվարչության այնպես և տեղկոմների կողմից։ Դրագարանների և ընթերցարանների շուրջը պիտի ստեղծել ակտիվ և նրա միջոցով ուժեղացնել ընթերցողների դաստիարակման գործը։

Համագումարը ընդգծելով հայերեն գրականության պակասը, հանձնարարում է կենտվարչության հարց հարուցել համապատասխան մարմինների առաջ, թարգմանական գեղարվեստական գրականության ուժեղացման և մասնագիտական (վիճակագրական, հաշվային, ապրանքագիտական) գրքերի հրատարակության մասին։

6. Ֆիզկուլտուրան դեռևս չի ընդգրկում միության անդամների լայն խավերին և պարփակված է խմբակների մեջ, որոնք գոյություն ունեն միայն Երևանում և Լենինականում։ Անհրաժեշտ է ֆիզկուլտ-խմբակներ ունենալ նաև մյուս գավառներում և շրջանային կենտրոններում, թեկուզ ուրիշ միությունների հետ միասին։ Պետք է զարգացնել ֆիզկուլտ-աշխատանքի սեկցիոն սիստեմը և դարկ տալ ապրտիվ մասսայական խաղերին։ Կատարել լայն պրոպոգանդիստական աշխատանք ֆիզկուլտուրայի գաղափարն արմատացնելու միությունական մասսաների մեջ, որպեսզի առողջապահական կյանք վարելու, աբևից, ջրից ու ոդից ոգտվելու և մարմնամարզությամբ զբաղվելու պահանջը դարդանա միության ամեն մի անդամի մեջ։

Եքսկուրսիան աշխատանքի հետագա զարգացման համար, անհրաժեշտ է ավելի ևս ուժեղացնել կենտ. և գավվարչությունների ղեկավարությունն այդ աս-

պարիզում։ Նկատի ունենալով եքսկուրսիոն ֆոնդի մասնակի կենտրոնացման տված խոշոր արդյունքը, հեռավոր եքսկուրսիաների կազմակերպման գործում, նման կենտրոնացումը համարել անհրաժեշտ և կենտրոնացման տոկոսը բարձրացնել, հասցնելով 15-ից 20%-ի։ Հարց դնել համապատասխան մարմինների առաջ մեծացնելու Հայաստանի եքսկուրսիոն բազաների թիվը և կանոնավորելու յեղածների գործունեությունը, ինչպես ապահովելու եքսկուրսիաներն անհրաժեշտ չափով ղեկավարներով։

7. Ուժեղացնել ռազմական պրոպագանդայի աշխատանքը միության անդամների մեջ։ Ռազմական լուսավորությունը չպիտի լինի չոր ու ձանձրալի և տարվի նեղ խմբակային աշխատանքի կարգով։ Անհրաժեշտ է հաճախակի կազմակերպել մասսայական նշանաձգություն, ռազմական եքսկուրսիաներ, արշավանքներ և այլն։ Միաժամանակ ուժեղացնել կապը Կարմիր բանակի հետ։

8. Ակումբները պիտի աշխատեն իրենց ուժերով կազմակերպված ներկայացումների քանակը կրճատել ի հաշիվ վորակի։ Միաժամանակ պետք է լայն կերպով ոգտագործել պրոֆեսիոնալ արտիստներին, նրանց ոգնությամբ և ուժերով կազմակերպել համերգներ և յերեկույթներ։

Մոտեցնելով մեր մասսային պրոլետարական թատրոնը, պիտի աշխատել հնարավորություն ստեղծել միության լայն խավերին ծանոթանալու պետական թատրոնների պրոլետարական բեմադրություններին։ Պիտի տարածել և մասսայական դարձնել խորհրդային և արտասահմանյան պրոլետարական գրա-

կանությունն ու մարքսիստական քննադատությունը, վորի համար կազմակերպել գրական յերեկոներ, գրականական դատեր և զեկուցումներ նվիրված պրոլետարական գրականությանն ու գեղարվեստին։

9. Համագումարն անհրաժեշտ է համարում շտապ կարգով ռադիոֆիկացիայի յենթարկել միության ակումբներն ու խոշոր կարմիր անկյունները։ Ռադիո աշխատանքը պետք է իր վորոշ տեղը բռնի մասսայական կուլտ-աշխատանքների մեջ։ Ռադիո-բարձրախոսներ յեղած վայրերում պիտի կազմակերպվեն ռադիո-խմբակներ՝ ուսումնասիրելու համար ռադիոյի գործը, թեորիապես և գործնականորեն։ Անհրաժեշտ է գյուղերն ուղարկել շրջիկ ռադիո, կազմակերպելով այդպիսին կենտ. է գավվարչությունների միջոցներով, կամ միացած ուրիշ միությունների հետ։

Միությունական մասսայական կուլտ-աշխատանքների մեջ կինո-աշխատանքը պետք է բռնի իրեն արժանի տեղը։ Միությունական մարմինները պետք է հետևեն, վոր կինո-աշխատանքն առևտրական թեքում չունենա և ծառայի իրոք մասսաների լուսավորության համար, մեծ մասամբ ձրիաբար։ Անհրաժեշտ է կինո-աշխատանքը կապել դասախոսությունների հետ.

10. Նկատի ունենալով, վոր մեր միությունը կազմված է վորոշ չափով իրարից տարբերվող խավերից (ծառայողներ, մասնագետներ, բանվորներ) և խմբերից (գործակատարներ, միլիցիա, խորհրդային ծառայողներ) կուլտ-կրթական աշխատանքի ընթացքում պիտի ուսումնասիրել և հաշվի առնել միությունական առանձին խմբակների և տարբեր խավերի պահանջները և ամբողջ կուլտուր-աշխատանքը պիտի

հարմարեցնել այդ տարբեր պահանջներին։ Անհրաժեշտ է, որ ակումբները կարողանան ամեն մի խմբակին առանձին սպասավորել։

11 Միության գործադուրկ անդամներին միության հետ կապելու և նրանց կուլտուրական պահանջներին բավարարություն տալու համար պետք է նրանց հատուկ կուլտ-սպասավորման գործը սպասավորել։

12. Հատուկ ուշադրություն դարձնել յերիտասարդների վրա և անհրաժեշտ պայմաններ ստեղծել նրանց մեջ կուլտ-աշխատանք տանելու համար։ Ակումբները պետք է հարմարություններ ստեղծեն յերիտ-սեկցիաների աշխատանքների համար։

13. Մինչև հիմա բավարար ուշադրություն չի դարձվել միության ուսանող անդամների կուլտուրական սպասավորմանը և կուլտուրական կապ ստեղծել ուսանողության Խորհուրդի պրոֆ կազմակերպությունների հետ, աջակցելու նրանց կուլտ-աշխատանքի ուժեղացմանը, ցույց տալով ղեկավարություն և ֆինանսական ոգնություն։

Միությունը պետք է միջոցներ ձեռք առնի աջակցելու հանալսարանա-ավարտներին նպատակահարմար ոգտագործելու համար։

14. Մեր կուլտ-կրթական աշխատանքը պիտի ընդգրկի նաև միության անդամների յերեխաներին։ Բացի նրանց մանկապարտեզներում և դպրոցներում տեղավորելու հոգսից, միության որգանները պետք է աշխատեն նրանց վերաբերմամբ կատարել կուլտուրական աշխատանք, կազմակերպելով ակումբներում և խոշոր կարմիր անկյուններում մանկական յերեկույթներ և կինո-սեանսներ։ Հայթայթել գրադարան-

ների միջոցով մանկական գրքեր, ընթերցարաններում ունենալ մանկական ժուրնալներ և պարբերաբար կազմակերպել բարձրաձայն ընթերցանություն յերեխաների համար։

15. Համագումարը գտնում է, վոր միությունական մարմինները գավառներում չպիտի բավականան միայն մնջմիությունական ակումբներում տարած աշխատանքներով և պետք է հայտնաբերեն ինքնուրույն նախաձեռնություն՝ զարգացնելու կուլտ աշխատանքը միությունական գծով։

Համագումարը հանձնարարում է նորընտիր կենտվարչությանը, այդ առթիվ տեղերին տալ հատուկ հրահանգ։

16. Նկատի ունենալով մեր միության անդամների ցրվածությունը և սակավաթվությունը գյուղերում, համագումարը գտնում է, վոր մեր միության գծով կարմիր անկյուններ և խմբակներ կարող են կազմակերպվել միայն շրջանային կենտրոններում, իսկ մընացած գյուղական վայրերում կուլտ-աշխատանքը պիտի տարվի Լուսաշխի, Բժշկա-սանիտարական և Գյուղանտառ միությունների հետ միասին և միահամուռ ուժերով։ Միությունական մարմինները պիտի աշխատեն գյուղի անդամներին հայթայթել թերթեր և գրականություն, սպասավորելով նրանց շրջիկ գրադարանով, շրջիկ կինոյով, շրջիկ ռադիոյով և մերթընդմերթ ակմբային խմբակներ ուղարկելով գյուղերը։ Գյուղ գնացող միության աշխատողները, պետք է ոգտագործվեն զեկուցումների և հարց ու պատասխանի յերեկոների կազմակերպման նպատակով։

17. Կուլտ ֆոնդի ապակենտրոնացումից հետո

մեծանում են ստորին կուլ-աշխատանքի հնարավորությունները. տեղկոմները և կուլտ հանձնաժողովները կարող են ավելի լայն նախաձեռնություն ցույց տալ այդ աշխատանքերին։ Անհրաժեշտ է, որ կարմիր անկյուններն ավելի ուժեղացնեն իրենց աշխատանքը և դարձնեն պլանային ու սիստեմատիկ, կիրառելով որացուցային ծրագրերը։

Կենտրոնական և Գավվարչությունները պետք է ավելի ևս ուժեղացնեն և սիստեմատիկ դարձնեն իրենց ղեկավարությունը պարբերաբար հրավիրելով կուլտ-հանձնաժողովների և կուլտ աշխատանքի առանձին հարցերի շուրջը խորհրդակցություններ։ Տեղկոմները պետք է պարբերաբար լսեն կուլտ հանձնաժողովների զեկուցումները և հետևեն նրանց ծրագրերի լրիվ և ժամանակին իրագործմանը։ Կենտ. և Գավվարչությունները պիտի կազմակերպեն կուլտ-հանձնաժողովների վերապատրաստման կարճատև կուրսեր։

18. Չնայած ստորին կուլտ աշխատանքի ծավալման, ակումբները շարունակում են մնալ իբրև մեր կուլտ աշխատանքի գլխավոր կենտրոնները։ Միությունական մարմինները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն վերացնելու ակմբային աշխատանքի թերությունները։ Անհրաժեշտ է ստեղծել ակմբային հասարակայնություն, կայունացնել ակումբների ֆինանսական դրությունը, կրճատելով ծախսերը և կանոնավորելով անդամավճարների գանձումը։ Պետք է ակմբային մասսայական աշխատանքը հարմարեցնել միության զանազան խավերի ու խմբակների պահանջներին, բարձրացնել մասսայական աշխատանքի վորակը, ստեղծել ակումբներում հանգստի պայմաններ։ Ա-

կումները պետք է լրիվ կերպով արտահայտեն միության կյանքը և նրա տարած աշխատանքը։ Համագումարը հանձնարարում է նորընտիր կենտվարչությանը հարց դնել վերադաս միությունական մարմինների առաջ, բաց թողնելու գումարներ Յերևանի և Լենինականի ակումբների լայնացման, վերանորոգման ու վերակահավորման համար։

19. Հաշվի առնելով կուլտ աշխատանքների մեջ պրոֆ մամուլի դերը, մասսայի ակտիվացման, միությունական աշխատանքի մեջ ներգրավման և ընդհանրապես մասսայի դաստիարակման գործում դիմել բոլոր ագիտացիոն միջոցների, տարածելու և մասսայականացնելու մեր միության կենտրոնական որգան «Նաշա գազետան»։ Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր ամեն մի միության ուսերին իմացող անդամ, աջակցի «Նաշա գազետա»-յի տարածմանը և մասսայականացմանը։ Ինչ վերաբերվում է Կենտկոմի «Ակտիվիստ» ժուրնալին, անհրաժեշտ է, վոր այդ ժուրնալը ստանա և դրանով ղեկավարվի միության յուրաքանչյուր ակտիվիստը։

Միաժամանակ միությունական մարմինները պիտի իրենց պարտքը համարեն, տարածել, ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղում «Աշխատանք» ժուրնալը և աշխատել նրան կապել միության մասսաների հետ։

20. Համագումարն առանձնապես ընդգծում է պատի լրագրերի խոշոր դերը մեր կոլլեկտիվներում և ակումբներում։ Նկատի ունենալով, վոր պատի լրագիրը շատ մեծ անելիքներ ունի պրոֆեսիոնալ կազմակերպությունների ինքնաքննադատման և ինքնա-

ստուգման գործում, նա կանոնավորում է տեղկոմի և նրա հանձնաժողովների գործունեությունը և ծառայում է իբրև խոշոր զենք, բյուրոկրատիզմի, ձգձգումների, մեշչանականության, ծառայողական քծնության ու կարիերիզմի դեմ մղվող պայքարում. համագումարը առաջարկում է միությունական մարմիններին ավելի յեռաս մոտիկից ղեկավարել պատի լրագրերը, ամենախիստ կերպով պաշտպանել բանթղթակիցներին հալածանքներից և վորպեսզի պատի թերթերում ցուցաբերված թերությունների վրա հարկավոր ուշադրություն դարձվի, պատի թերթերի խմբկոլներին կից կազմակերպվի նվաճումների բյուրոներ։

21. Ակմբային մասսայական աշխատանքները պետք է անպայման կապ ունենան միության առջև կանգնած խնդիրների, միության կողմից տարվող կամպանիաների հետ (հավաքական պայմանագրերի, տեղկոմների վերընտրություն, պրոֆկոմբակների կազմակերպում «Նաշա գազետա»-յի տարածում, պայքար բյուրոկրատիզմի դեմ և այլն)։ Կենդանի լրագիրը պիտի արտացոլի միության հաջողությունները և թերությունները, տեղկոմների բացերը, միության ընդգրկած հիմնարկների բացասական կողմերը։

Ակումբները և կարմիր անկյունները պիտի կազմակերպեն ցուցահանդեսներ, կազմեն դիագրամաներ, անկյուններ, վորոնք ցույց տան աշխատանքի պաշտպանության և տնտեսական հանձնաժողովների կատարած աշխատանքները և միության նվաճումներն ու հաջողությունները տնտեսական աշխատանքի և այլ ասպարեզներում։

—

ԲԱՆԱՁԵՎ

ԲԱՆԴՅՈՒՂՏԵՍԶՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Խորհրդաժողովի միության հանրապետական 6-րդ համագումարը լսելով ընկ. Ս. Ամիրխանյանի զեկուցումը ՀՍԽՀ ԲԳՏ ժողկոմատի տարած աշխատանքների մասին պետական և տնտեսական ապարատի բարելավման ու եժանացման ասպարիզում, բյուրոկրատիզմի, քաշքշուկների և անտնտեսավարության դեմ վարած պայքարի և ինքնաքննադատության նախնական արդյունքների մասին, նշում է, որ ԲԳՏ կողմից մեծ և դրական աշխատանք է կատարված ավելի ճկուն և եժան ապարատ ստեղծելու, ինքնաքննադատությունը ծավալելու և մասսաների սեփականություն դարձնելու համար, ինչպես նաև բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ասպարիզում։

2. ԲԳՏ հաջողությունները վարչա-տնտեսական ծախսերի 20 տոկոսային կրճատումների և բարձրագույն մարմինների կողմից տրված դիրեկտիվների կիրառման ասպարիզներում, հնարավոր են յեղել շնորհիվ բանվորների և ծառայողների լայն մասսաների մասնակցության։

. Արձանագրելով պետապարատի պարզեցման և եժանացման գծով մինչև այժմ ձեռք բերած շոշափելի նվաճումները, համագումարը միաժամանակ գտնում է, որ չպետք է բավարարվել կատարվածով, քանի որ

այդ ապարատը դեռևս հեռու չէ բավականաչափ ճկունություն լինելուց և այդ պատճառով անհրաժեշտ է կրկնակի չեռանդով շարունակել աշխատանքները վարչատնտեսական ծախքերի կրճատման ուղղությամբ, պետական և տնտեսական ապարատը սիստեմատիկ կերպով ռացիոնալացման յենթարկելու և աշխատանքի ձևերի ու սիստեմների բարելավման միջոցով։

Համագումարը միաժամանակ ընդգծում է, որ Խորհրդային ապարատի սոցիալիստական ռացիոնալացումը հնարավոր չէ առանց բանվորագյուղացիական լայն մասսաների ակտիվ մասնակցության, վողջ խորհրդային հասարակայնության կողմից մեր ապարատի աշխատանքների վրա կենդանի և լարված հսկողություն սահմանելու և առանց ինքնաքննադատության հետագա ծավալման։

Այս հանգամանքը հարկավոր է լրիվ կերպով հաշվի առնել խորհրդային ապարատի հետագա բարելավման համար շարունակվելիք պայքարի ընթացքում։

3. ԲԳՏ հիմնական ուշադրությունը, ինչպես մինչև այժմ, այսուհետև ևս պետք է ուղղել մեր ապարատի բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ ամենաակտիվ կերպով պայքարելու գծով։

4. Համագումարը գտնում է, որ պետ ապարատի պարզեցման և բարելավման համար շարունակվելիք պայքարի մեջ մեր միության անդամների ավելի ստվար զանգվածներ ներգրավելու, ԲԳՏ աշխատանքների և պրոֆմիությունական տնտեսական հանձնաժողովների գործունեության միջև ավելի սերտ և կենդանի կապ հաստատելու նպատակով, անհրաժեշտ է՝

ա) միության կոնֆերենցիաներում և համագում-

մարներում պարբերաբար լսել ԲԳՏ զեկուցումներ՝ իր տարած աշխատանքների մասին.

բ) ԲԳՏ հետազոտական աշխատանքներին մասնակից անել միության որգաններին և հետազոտությունների արդյունքների մասին զեկուցել այն հիմնարկության կոլեկտիվում, որը յինթարկված է հետազոտման.

գ) ԲԳՏ մարմինների կողմից հետազոտական աշխատանքների համար լրիվ կերպով ոգտագործել տնտեսական խորհրդակցությունների և հանձնաժողովների համապատասխան նյութերը.

դ) Ավելի սերտ կապ հաստատել ԲԳՏ կից գործող հաշվային Խորհրդի և Խորհրդային կից հաշվային Ասոցիացիայի միջև։ Հարց դնել ԲԳՏ-ի առաջ, որ վերջինս հաշվային աշխատողների ասոցիացիային մասնակից անի պետական հիմնարկ-ձեռնարկների հաշվապահության կրճատման և պարզեցման գործին։

յե) Միության կողմից առանձնահատուկ ուշադրության առարկա դարձնել տնտեսական խորհրդակցությունների և հանձնաժողովների այն բոլոր վորոշումներն ու առաջարկությունները, վորոնք նպատակ ունեն բարելավելու և եժանացնելու մեր ապարատը և վերացնելու բյուրոկրատական խեղաթյուրումները ու քաշքշուկները։

զ) ԲԳՏ ամենալայն տեղակցությունը մեր միության կենտրոնական վարչությանն այն բոլոր դեպքերում, յերբ վերջինս ուզում է պատասխանատվության կանչել այն անձանց, վորոնք բացահայտ կամ քողարկված կերպով հետապնդում, հալածում են թղթակիցներին, կամ տնտեսական հանձնաժողովում ակ-

տիվ մասնակցություն ցուցաբերող այս կամ այն ընկերոջը։

ե) ԲԳՏ-ը պետք է պարբերաբար ստուգի, թե ինչ չափով հիմնարկ-ձեռնարկների վարչությունները իրագործում են տնտեսական հանձնաժողովների և խորհրդակցությունների առաջարկները և պատասխանատվության յենթարկի այն վարչություններին ու տնտեսավարներին, վորոնք հանցավոր անուշադրության են մատնում այդ առաջարկները։

5. Համագումարն ընդգծում է, վոր ամեն մի խորհրդային ծառայողի պարտականությունն է ակտիվ մասնակցել բյուրոկրատիզմի, անտնտեսավարության և քաշքշուկների դեմ մղվող պայքարին, ցուցաբերելով անհատական ինիցիատիվա ապարատի վերքերը բուժելու գործում։

Պետք է կռիվ հայտարարել պետապարատի հաճախորդների կարիքների և դիմումների նկատմամբ այս ու այնտեղ դեռևս տեղի ունեցող ձևական և անուշադիր վերաբերմունքի դեմ։

6. Կարևոր համարելով պետական և առևտրա-կոոպերատիվ ապարատի աշխատանքի արտադրողականության և աշխատանքային դիսցիպլինայի հետագա բարձրացումը, համագումարն ընդգծում է, վոր ԲԳՏ-ը պիտի այդ ուղղությամբ աշխատի։ Առաջին հերթին ԲԳՏ-ը պետք է հետևի, վոր հիմնարկ-ձեռնարկներում՝

ա) ճշտորեն վորոշված լինի ամեն մի աշխատակցի պարտականությունների շրջանակը,

բ) նշանակված լինի հսկողություն աշխատակիցների աշխատանքի գալու և աշխատանքից գնալու վերաբերմամբ։

7. Մեզ մոտ գլխավոր հաշվապահների իրավունքների և պարտականությունների սահմանները հարկավոր չափով ճշտված չեն։ Համագումարն անհրաժեշտ է համարում, որ արագացվի ԽՍՀՄ ի կառավարության կողմից գլխավոր հաշվապահների իրավունքների ու պարտականությունների մասին հանված որոշումների լայն հրապարակումը։

8. Արձանագրելով, որ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, շնորհիվ ինքնաքննադատության զգալի նվաճումներ են արված սոցիալիստական շինարարության ասպարիզում։ Համագումարն այսուամենայնիվ գտնում է, որ ինքնաքննադատության լոզունգը դեռևս բավականաչափ չի մասսայականացված և նրա նշանակությունը բավականաչափ չի պարզաբանված բանվորագյուղացիական լայն մասսաների առաջ։

Անհրաժեշտ է պետապարատում ավելի ևս համարձակ ու համառ կերպով ծավալել ինքնաքննադատությունը, այդ լավագույն միջոցը խորհրդային հասարակայնության կողմից բյուրոկրատիզմի և անտրնտեսավարության դեմ գրոհ կազմակերպելու համար։

9. Վողջունելով ԲԳՏ-յան նախաձեռնությունը՝ «Խորհրդային Հայաստան»-ին կից «Բանգյուղտեսչության թերթիկ»-ին հրատարակման դրծում, համագումարը Խորհրդի միության բոլոր անդամներին պարտավորեցնում է համապատասխան նյութերի մատակարարման միջոցով ամենալայն կերպով աջակցել «ԲԳՏ-յան թերթիկ»-ի հետագա զարգացմանը։

Համագումարը միանգամայն անհրաժեշտ է համարում, որպեսզի, թե ԲԳՏ-ը, թե միությունական

մարմինները և թե մնացած համապատասխան կազմակերպությունները վոչ մի թղթակցություն, վոր հայտնաբերում է մեր ապարատի հիվանդոտ կողմերը չթողնեն անուշադիր, անհապաղ քննության առնել այն և հետևանքների մասին թերթի միջոցով հայտարարեն։

ՀԿ (բ) ԿԿ Կոմիտեյին

Խորհրդի միության Հայաստանի 6-րդ հանրապետական համագումարն իր ջերմագին վողջույնն է ուղղում Լենինիզմի դրոշակակիր, սոցիալիստական շինարարության շտաբ՝ Հայաստանի Կոմունիստական (բ) Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյին։

Մեր միությունը խորապես գիտակցում է այն խոշոր դերը, վոր ընկնում է խորհրդային առևտրա-կոոպերատիվ աշխատավորների վրա, պետական և առևտրական ապարատի ռացիոնալացման, գների իջեցման, պետապարատից բյուրոկրատիզմի և քաշքըշուկների վերացման գործում։

Համագումարը հավաստիացնում է, վոր խորհրդային, առևտրական և կոոպերատիվ հիմնարկների ու միլիցիայի աշխատողներն իրենց ամբողջ յեռանդն ու կամքը լարում են և հետագայում ավելի ևս կլարեն սոցիալիստական շինարարության հաջողության, պետական և առևտրա-կոոպերատիվ ապարատի կատարելագործման բանվորագյուղացիական մասսաներին ավելի մոտից ու կատարելապես սպասավորման համար։

Համագումարը հավատացած է, վոր Կոմկուսակցության հմուտ ղեկավարությամբ Խորհրդային իշխա-

նությունը հաղթահարելով իր առաջ յեղած բոլոր դժվարությունները կիրագործի սոցիալիզմի կառուցումը։

ԿԵՑՑԵ՛ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.

ԿԵՑՑԵ՛ ՄԵՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

ՄՈՍԿՎԱ

Խորհրդային Կենտկոմին Պատեն «Նաշա Գազետա» թերթին

Խորհրդային միության Հայաստանի 6-րդ համագումարն իր ջերմագին վողջույնն ե հղում Կենտկոմին՝ պետական-առևտրական կոոպերատիվ ծառայողների միլիոնավոր բանակի բարձրագույն մարմնին և շտաբին. համագումարը խոստանում ե ձեր հմուտ ղեկավարության տակ իրականացնել 5 րդ համագումարին տված Ի.Լենինի պատգամները և ել ավելի զարգացնել պետական ապարատն աշխատողների հասարակական դաստիարակման գործը սոցիալիստական շինարարության անձնվերության վոգով։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՑԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ

Կենտ. վարչության անդամներ.

1. Պողոսյան Գուրգեն, 2. Բունյաթյան Տիգուշ, 3. Պապյան Ղազարոս, 4. Հով-

կիմյան Հասմիկ, 5. Նիկողոսյան Առաքել, 6. Բալայան Լևոն, 7. Գալստյան Արշակ, 8. Հարությունյան Սարգիս, 9. Մկրտչյան Սուզան, 10. Ազրոյան Վարդան, 11. Դունիյամալի, 12. Միքայելյան Սուրեն, 13. Բաղեշթյան Արգար, 14. Զաքարյան Ստեփան, 15. Սիմոնյան Սուրեն, 16. Զալդրանյան Հայկ, 17. Ամարյան Սամվել, 18. Փանոսյան Սմբատ, 19. Մելիք-Աբրահամյան Լևոն։

Թեկնածուներ.

1. Սեդրակյան Հայրիկ, 2. Սահակյան Գառնիկ, 3. Փանյան Պերճ, 4. Խանլարյան Արամ, 5. Ներսեսյան Հայկ, 6. Հովհաննիսյան Հմայակ, 7. Ավետիսյան Կարապետ,

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ.

Անդամներ.

1. Պողոսյան Գուրգեն, 2. Բունյաթյան Տիգուշ, 3. Պապյան Ղազարոս, 5. Նիկողոսյան Առաքել, 5. Բալայան Լևոն, 6. Գալստյան Արշակ, 7. Դունիյամալի։

Թեկնածուներ.

1. Բաղեշթյան Արգար, 2. Հարությունյան Սարգիս, 3. Ազրոյան Վարդան։

ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆ. ԿԱԶՄԸ.

1. Գրիգորյան Սոֆիկ, 2. Ներսեսյան Խորեն, 3. Գասպեր Նատան, 4. Զանյան Ռոզա, 5. Ալեքսանյան Գարեգին։

ՑԱՆԿ

Երես

Բանաձև միության Կենտկոմի զեկուցման առթիվ 3
» Կենտվարչության զեկուցման առթիվ 5
» Կազմակերպչական աշխատանքի ասպարիզում 9
» Կուլտ-կրթական աշխատանքի ասպարիզում 28
» Բանգյուղտեսչության զեկուցման առթիվ 41
Հեռագիր ՀԿ (բ) ԿԿ Կոմիտեին . . . 46
» Միության Կենտկոմին և «Նաշա Գազետա» թերթին . . . 47
Կենտ. վարչության, Նախագահության և վերըստուգիչ հանձնաժողովի կազմը . 47



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0044976

154

A Ի 8071

Գինը 25 կոպ.